

Բանալի բառեր՝ գյուղատնտեսություն, բյուջետային ծախսեր, աջակցություն, ծրագրեր, արդյունավետություն:

ՀՏԴ 338.43

ՀՀ ԳՅՈՒԴԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՔԱՌՈՒՄԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

Ատենախոսության թեմա՝

ՀՀ գյուղատնտեսության ոլորտի բյուջետային ծրագրերի տնտեսական արդյունավետության բարձրացման ուղիները

Լուիզա ՀՈՒՆԱՆՅԱՆ

ՀԱՄՀ հայցորդ

Գիտական դեկավար՝

Սամվել ԱՎԵՏԻՍՅԱՆ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացումը եղել և մնում է ՀՀ ֆինանսական համակարգի ամենահրատապ հիմնախնդիրներից մեկը: Վերջինս մշտապես քննարկվում ու քննադատվում է ինչպես պետական կառավարման համակարգում, այնպես էլ քաղաքացիական հասարակության շրջանակներում: Այդ գործընթացներն ակտիվանում են հատկապես՝ ՀՀ Ազգային ժողովում նոր բյուջեի հաստատման ու նախորդ տարվա բյուջեի կատարման հաշվետվության քննարկման ժամանակ: Այդուհանդերձ, ծրագրային բյուջետավորման համակարգի ներդրումը պահանջում է բյուջետային ծրագրերի արդյունավետությունը գնահատել հատկապես՝ շահառուների տեսանկյունից, քանի որ ծրագրերի ակնկալվող և փաստացի արդյունքներն ավելի լավ զգում են անմիջական շահառուները: Ուստի, բյուջետային ծրագրերի արդյունավետության գնահատման համար, ի թիվս մոնիթորինգի այլ ձևերի, նպատակահարմար է շահառուների շրջանում որոշակի պարբերականությամբ ու որոշակի ընտրանքով անցկացնել հարցազրույց և վերլուծել դրանց արդյունքները:

Աղյուսակ 1.

ՀՀ գյուղատնտեսության տեղը տնտեսության մեջ և պետական աջակցության ծավալները՝ 2010-2015թթ.

	Ցուցանիշները	Չափման միավորը	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.
1.	Գյուղատնտեսության տեղը ՀՆԱ-ի կառուցվածքում	%	17.0	20.3	19,1	18.4	18.1	17.3
2.	Գյուղատնտեսության բյուջետային հատկացումներ/ ՀՆԱ	%	1.13	1.10	0.53	0.38	0.46	0.66
3.	1 հա ցանքատարածության հաշվով բյուջետային հատկացումները	Հազ. դրամ	138.15	144.96	69.46	54.92	58.38	93.95
4.	Գյուղատնտեսության ոլորտի 1 զբաղվածի հաշվով բյուջետային հատկացումները	Հազ. դրամ	85.66	90.86	48.33	41.39	49.21	87.20
5.	Գյուղատնտեսության բյուջետային հատկացումները	Մլրդ. դրամ	39.18	41.56	21.13	17.47	19.43	33.05
5.1.	այդ թվում՝ գյուղատնտեսության նախարարություն	Մլրդ. դրամ	7.17	5.81	9.11	9.33	9.65	12.7
6.	ՀՆԱ	Մլրդ. դրամ	3460.03	3777.95	4000.72	4555.64	4228.63	5032.09
7.	Չբաղվածների թիվը	Հազ. Մարդ	457.4	457.4	437.2	422.1	394.8	379.0
8.	Ցանքատարածություններ	Հազ.հա	283.6	286.7	304.2	318.1	332.8	351.8

Բյուջետային գործընթացի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրան համահունչ գործող ծրագրերը հիմնականում ըստ արժանավույն հիմնավորված են և դրանց նպատակահարմարությունը գրեթե անժխտելի է: Ինստիտուցիոնալ առումով ևս՝ մինչև միջնաժամկետ ծախսային ծրագրերում հաստատագրումը, պետական կառավարման լիազոր մարմին – ֆինանսների նախարարություն – կառավարություն համակարգի յուրաքանչյուր հանգրվանում քննարկումները ծրագրերի բազմակողմանի

հիմնավորման երաշխիքներ են ստեղծում: Սակայն նույն բանը դժվար է ասել ծրագրերի իրականացման գործընթացի և հատկապես՝ մշտադիտարկման համակարգի մասին:

Աղյուսակ 2.

ՀՀ Արարատի, Շիրակի և Գեղարքունիքի մարզերի 210 տնտեսություններում անցկացված հարցման արդյունքները(%)¹

Հ/Հ	Աջակցության ծրագրերը	2017-2019թթ տարեկան հատկացումը, մլն. դրամ ²	Արարատի մարզ		Շիրակի մարզ		Գեղարքունիքի մարզ	
			Անհրաժեշտությունը	Արդյունավետությունը	Անհրաժեշտությունը	Արդյունավետությունը	Անհրաժեշտությունը	Արդյունավետությունը
1	2	3	4	5	6	7	8	9
1.	Բույսերի պաշտպանության միջոցառումներ	100	70	65	20	30	25	20
2.	Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում	1.188.5	80	60	90	50	80	70
3.	Գյուղական խորհրդատվական ծառայություններ	397,1	60	30	50	40	60	50
4.	Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտներում ծառայությունների մատուցում	135,2	20	10	40	50	40	50
5.	Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերման համար	2.560,0	80	40	90	30	90	30
6.	Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով դիզելային վառելիքի ձեռք բերման համար	330.0	30	30	50	20	70	30
7.	Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում	1.163.0	70	50	50	50	80	20
8.	Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր փորձաքննությունների և բույսերի պաշտպանության միջոցների լաբորատոր փորձաքննությունների իրականացում	347.0	30	30	40	20	40	30
9.	Վարկային (ՀԲ, ԻՖԱԴ, ՕՊԵԿ) միջոցներով իրականացվող ծրագրեր	20086*	50	30	70	50	65	30
10.	Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում	5375.4	70	40	60	50	60	50
11.	Ոռոգում-ջրառ իրականացնող կազմակերպություններին ֆինանսական աջակցության տրամադրում	1138,4	40	20	30	20	30	30
12.	Կոլեկտորադրենաժային ցանցի պահպանում և շահագործում, գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման աշխատանքներ	321,5	70	60	30	20	30	20
13.	Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի արդյունավետության բարձրացման ծրագիր	2017թ. 3646.0	60	50	70	40	50	50
14.	Միջին ցուցանիշը		56,1	39,6	53,1	36,1	53,8	36,9

*2017-2019թթ. ընդամենը գումարը

¹ Հարցվողներին առաջադրվել է մեկ հարց՝ 100 բալային համակարգով գնահատել գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության ծրագրերի անհրաժեշտությունը և արդյունավետությունը

² ՀՀ 2017-2019թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիր, էջ 392-400

Այսպես, գյուղատնտեսության ոլորտին հատկացվող բավականին համեստ միջոցները կարծես թե ուղղորդվում են ամենամեծ ծախսերի և կարևոր ծրագրերի իրականացմանը, մինչդեռ այդ հատկացումների արդյունքը շոշափելի չէ և անմիջական շահառուների կողմից նկատելի չէ: Դրա հիմնական պատճառներից մեկն այն է, որ գյուղատնտեսության պետական աջակցության ֆինանսավորման ծավալները շատ սահմանափակ են (տես՝ աղյուսակ 1): Բավական է նշել, որ 2010-2015թթ. հանրապետության ՀՆԱ-ի մեջ գյուղատնտեսության մասնաբաժինը միջին հաշվով կազմել է 18%, մինչդեռ գյուղատնտեսության բյուջետային հատկացումները նշված տարիներին տատանվել է 0.38-1,13%-ի սահմաններում: Նույն ժամանակաշրջանում 1 հա ցանքատարածության հաշվով ընդամենը ոլորտին հատկացված բյուջետային գումարը տատանվել է 144,96-ից (2011թ.) 54.92 (2013թ.) հազ. դրամի, իսկ 1 զբաղվածի հաշվով՝ 90.86-ից (2011թ.) 41,39 (2013թ.) հազ. դրամի սահմաններում: Եթե նկատի ունենանք, որ այդ գումարի մեջ ներառված են նաև ՀՀ գյուղատնտեսության նախարարության պահպանման, նախարարության աշխատակազմի սոցիալական փաթեթով ապահովման ծախսերը և գյուղացուն անմիջականորեն չօժանդակող որոշ ծրագրերի գումարները, ապա միանգամայն պարզ կդառնա, որ սահմանափակ միջոցներով պետական աջակցությունն էական ազդեցություն չունի գյուղատնտեսության ոլորտային առանձնահատկությունից բխող հիմնախնդիրների լուծման վրա:

Ուստի, պատահական չէ, որ գյուղացիական տնտեսությունների շրջանում իրականացված հարցումները ցույց են տալիս, որ բյուջետային ծրագրերի արդյունավետությունը դեռևս ցածր է և չի համապատասխանում այն ակնկալվող արդյունքներին, որոնք ներկայացված են դրանք հիմնավորող փաստաթղթերում: Այսպես, ՀՀ 3 մարզերի 210 գյուղացիական տնտեսություններում կատարված հարցումների արդյունքները բավականին տրամաբանական են և հնարավորություն են տալիս գնահատել գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրերի արդյունավետությունը:

Հարցումների համար ընտրվել են ՀՀ Արարատի մարզի Խարբերո, Արևշատ, Զաղցրաշեն, Շահումյան, Փոքր Վեդի, Դարակերտ և Ռանչպար, ՀՀ Շիրակի մարզի Ագատան, Արևիկ, Կամո, Մեղրաշեն, Փանիկ, Ողջի և Մեծ Սեպասար, ՀՀ Գեղարքունիքի մարզի Դոմաշեն, Լճաշեն, Նորատուս, Սարուխան, Ներքին Գետաշեն, Չոլաքար և Մեծ Մասրիկ համայնքների 10-ական գյուղացիական տնտեսություններ: Ինչպես նկատելի է աղյուսակ 2-ից, հարցումների համար դիտարկվել են գյուղատնտեսության պետական աջակցության 13 ծրագրեր: Հարցվողներին առաջադրվել է 100 բալային համակարգով կամ տոկոսով գնահատել յուրաքանչյուր ծրագրի անհրաժեշտությունն ու արդյունավետությունը:

Մեր դիտարկումները հիմք են տալիս եզրակացնելու, որ շահառուները համեմատաբար մեծ կարևորություն են տալիս և արդյունավետ են գնահատում «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» և «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույթների սուբսիդավորում» ծրագրերին: «Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութերի ձեռք բերման համար» և «Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում» ծրագրերը կարևորվում են, սակայն արդյունավետության գնահատականները ցածր են: Ընդհանուր առմամբ՝ ուսումնասիրվող բոլոր մարզերում հարցվողների կողմից գյուղատնտեսության աջակցության բյուջետային ծրագրերի կարևորությունը գնահատվել է 53,8-56,1%, իսկ արդյունավետությունը՝ 36,1-39,6%-ի շրջանակներում: Այս ցուցանիշները բավականին ցածր են, և նման գնահատականները պահանջում են հիմնովին վերանայել ծրագրերի իրականացման կառուցակարգերը:

Ներկայացվել է 19.07.2017թ.
Ընդունվել է տպագրության 31.08.2017թ.